ՄԽ.

Բ

Գերամեծար գերյարգելի Աբբայ հօր մերոյ
Ստեփաննոսի վարդապետի ողջոյն

Թղթ. ՃԿՁ

... ի հոկտ. 1 եղև եանղըն մեծկակ ի պէկ օղլուն ի տեօրթեօլ աղզըն. և այրեցան տունք իբր 50, յորոց յոլովքն էին տունք փրանկաց և թէրճիմանաց՝ տունք հարուստք և մեծամեծք պարապք ի տանուտեարց. զի վասն ժանտամահին էին փախուցեալք ի գիւղօրէս. և վասն այն եղև նոցա վնաս յոյժ մեծ, թող զվնասն ի եաղմաճոց: Եւ հուրն ի վանից սրբոյն անտոնի ոըմնակցի մուրատճայենց տան Հ. Յովսէփին մերոյ: (Ասի արկեալ զօլ հուրն անդ ի սախըզցի աչճիէ նոցա, որ երկու ամսօք յառաջ էր աչճի և սպասաւոր ճէւահիրճի փրէնկի միոջ քիրաճիի մուրատճայենց, յորմէ վասն անզգամութեան արտաքսեալ՝ մտեալ էր ի սուրբն անտոն. և ոխայր փրէնկին այնմ այրել զտունն ի վերայ գլխոյն, զոր և արարն իսկ.) և անտի ճանց հուրն ի տուն մուրատճայենց ի ճամէքեան սուֆան նոցա ի վերին խաթըն, և սկսաւ զօրանալ, և այրել զվանքն սրբոյն անտոնի, և զտունն մուրատճայենց ի վեցերորդ ժամու գիշերոյն, և անտի ճանց ի հանդիպոյ եղեալ տունսն նոցին յայն սօխախ, և սկսաւ փչմամբ հարաւային հողմոյ այրել և ընթանալ. և այրեաց յերկոցունց կողմանց նոյնոյ սօխախին զամենայն տունս մինչև ի կրպակ սըղըր խասապին մօտ տաճկի սարային խալաթիոյ: Այրեցան երկոքին ժամքն փրանկաց, այսինքն ժամն սրբոյն անտոնի և ժամն սուրբ երրորդութեան: Այրեցաւ և սարայն նեմցէ դեսպանին. այրեցաւ և բնակարան աթանաս վարդապետին մերոյ, և եղև նմա վնաս ոչ սակաւ...:

1762, *Հոկտ.* 13 — *Նուաստ ծառայ*
[*Կ. Պոլիս*] — *Հ. Զաքարիա Վ. Ա.*

ՄԽԱ.

Այս շատ հետաքրքրական թուղթը կը տեղեկագրէ մեզ՝ ընդ մէջ կղեմէս ԺԴ.ի և մեր Նամակագրին՝ Վատիկանու մէջ տեղի ունեցած հարցուպատասխանի մը:

Եղ. Արսէն (յետոյ Հ. Ստեփան) յանձնարարութեամբ Հ. Մ. Անանեանցի՝ իբր թարգման կ'ընկերանայ Լիվոռնոյէն Հռոմ եկող Ջուղայեցի Իգնատիոս անուն քահանային, սա՛ր իսկ թախանձանօք, երբ սա Ս. Քահանայապետէն ունկնդրութիւն ընդունած էր:

Գերյարգոյ և ամենապատիւ տեառն Ստեփաննոսի Աբբայի խնդալ

... ի վճարիլ հարցմանցն որ զքահանայէն, դարձոյց զերեսս իւր ի դէմս իմ, և ասէ ցիս. ապաքէն դու ի վենետկոյ ես: Եւ ես ասեմ, այո՝ հայր սուրբ, եմ կրօնաւոր վանից սրբոյն Ղազարու որ ի վեն՝՝: Ասէ պապն. գիտեմ ես զվանս սրբոյն Ղազարու, և գնացեալ եմ անդ. է այն մենաստան գեղեցիկ և վայելուչ: Եհարց դարձեալ. քանի միաբանք կան այժմ: Ասեմ ես. աւելի քան զյիսուն: Ասէ սրբազանն. ունի՞ք նորընծայս: Ետու պատասխանի. են նորընծայք, են և վարժարանեցիք, և այլ միաբանք իւրաքանչիւր կարգի և աստիճանի: Եհարց քահանայապետն. և իւ կեայք: Ասեմ ես. դոյզն ողորմութեամբքն պատարագի զոր հիմնեալ են բարերարք միաբանութեան մերոյ, և այլ